«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՝Սովորողների ներգրավվածությունը դասին մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ

ԴՊՐՈՑ ՝ Հայկավանի միջնակարգ դպրոց

ՈՒՍՈՒՑԻՉ ՝ Դիանա Մարգարյան

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ ՝ Հասմիկ Պողոսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան_____3

Գրականության ակնարկ_____5

Գործնական համատեքստ_____7

Հետազոտության ընթացք_____8

Վերլուծություն_____14

Օգտագործված գրականություն_____15

ՆԱԽԱԲԱՆ

Արդի ժամանակահատվածում, մեդիամանկավարժության ոլորտում, ակտիվորեն իրականացվում է համաշխարհային առկա փորձի յուրացում և իմաստավորում, ինչը մեծապես պայմանավորված է մեդիակրթության զարգացման ուղիների և հեռանկարների նախանշման, ժամանակակից մարդու՝ աշխարհի հետ փոխներգործության խնդիրների լուծման հրատապությամբ: Ուստի օրինաչափ է, որ այսօր առավել հաճախ ենք անդրադառնում կրթական համակարգում գերակա համարվող այնպիսի խնդիրների, ինչպիսիք են մեդիակրթական գործունեության, կազմակերպումը, սովորողների մեդիագրագիտության, մեդիակոմպետենտության ձևավորմումը: Մի շարք մտածողներ անդրադարձել են այս հարցին /Ե.Ա.Բոնդարենկո, Օ.Ա.Բարանով, Ս.Ն.Պենզին, Ի.Վ.Ժիլյավսկայա, Ա.Վ.Ֆյոդորով, Ե.Վ. Մյուրուկին, Ի.Վ.Չելիշևա և այլք/: Նրանց կողմից, մշակվել և ներդրվել են որոշ ուսումնական ծրագրեր, վերլուծվել են մի շարք տեսական, հայեցակարգային մոտեցումներ, որոնք մեծ նշանակություն են ունեցել մեդիամանկավարժական գաղափարների տեղայնացման և գործնականում դրանց կիրառման համար: Մեդիակրթական մանկավարժական հնարները սահմանվում են ընդհանուր դիդակտիկական սկզբունքներով, ուստի և անհատական, խմբային և կոլեկտիվ եղանակներով իրականացվող աշխատանքներում կիրառվող մեդիակրթական հիմնական մեթոդական և տեխնոլոգիական հնարներն ուղղված են մեդիա արտադրանքի միջոցով սովորողների ստեղծագործական գործունեության խթանմանը:

Հետազոտելու համար նպատակ եմ դրել պարզելու՝ ինչպիսի մեթոդներ են կիրառում ուսուցիչները սովորողներին ներգրավելու համար ուսումնական գործընթացի մեջ: Ինչ քայլեր են ձեռնարկում ուսուցիչները, որ իրենց սովորողները գրագետ դառնան, ինչ մեթոդներ են կիրառում: Պարզել՝ առկա են արդյոք սուբյեկտ-սուբյեկտ փոխհարաբերություններ ուսուցչի և սովորողների միջև:

Որպես հետազոտող՝ առանցքային հիմնահարց է սովորողների մեդիագրագիտության զարգացումը:

Հետազոտության նպատակն է պարզել դպրոցում սովորողների նեգրավվածության առանձնահատկությունները, մոտիվացիայի անկման և բարձրացման պատճառները: Կան որոշակի գործոններ, որոնք ազդում են սովորողների սովորելու մոտիվացիայի վրա: Հետազոտության օբյեկտ: Սովորողների սովորելու վրա ազդող գործոններ: Հետազոտության առարկա: Աշակերտների և ուսուցիչների կարծիքը սովորելու վրա ազդող գործոնների վերաբերյալ:

Հետազոտական նպատակ: Պարզել սովորողների սովորելու մոտիվացիայի անկման կամ բարձրացման վրա ազդող գործոնները:

Հետազոտական խնդիրներ

Խնդիր 1. Պարզել սովորողների սովորելու վրա ազդող գործոնները ուսուցիչների տեսանկյունից:

1. Պարզել սովորողների հաճախելիությունը դասերին:

2. Պարզել՝ արդյոք սովորողները ակտիվորեն մասնակցում են դասընթացին, թե պասիվ օբյեկտներ են/ որքանով են ազատ հարցեր տալիս, կարծիք արտահայտում/:

3. Պարզել դասընթացի կազմակերպման ժամանակ կիրառվող մեթոդները:

3. Արդյոք կիրառվում են դերային խաղեր, դեպքի ուսումնասիրությունները, խմբային քննարկումներ, ուղեղների գրոհներ, ինքնուրույն աշխատանքներ, դասախոսություններ և այլ մեթոդներ: Պարզել մեթոդի թույլ և ուժեղ կողմերը:

4. Պարզել գնահատման օբյեկտը կրթական գործընթացում. ինչն է գնահատվում ուսուցչի կողմից (գիտելիքի վերարտադրությունը,սովորողի ստեղծագործական, վերլուծական աշխատանքը):

5. Պարզել՝ ինչ դեր ունեն սովորողներն իրենց գիտելիքի ձեռքբերման գործում:

6. Պարզել, թե դասընթացի կազմակերպումը ինչ ձևով է տեղի ունենում, ինչպիսի խմբերի հետ են ուսուցիչները աշխատում, ինչպիսի հանձնարարականներ են տալիս սովորողների: Արդյոք սովորողների քանակը ազդում է սովորողների սովորելու մոտիվացիայի վրա:

7. Պարզել ուսուցչի վերաբերմունքը սովորողի նկատմամբ: Ինչպիսի կարծիք է ձևավորում ուսուցիչը սովորողների մասին: Ինչպիսի պարտականություններ է

ստանձնում սովորողներին, և արդյոք նրանք պատասխանատվություն են վերցնում իրենց վրա:

8. Պարզել՝ որքանով է մատուցված նյութը պետքական և կիրառելի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ակնհայտ է մեդիագրագիտության ձևավորման և զարգացման գործընթացի փուլայնությունը, որը ներառում է տեսական մեդիագիտելիքների համալիրը, ստացված գիտելիքների գործնական կիրառման, ստեղծագործական և խաղային բնույթի առաջադրանքների կատարման, մեդիատեխնիկայի հետ աշխատանքի կարողություններն ու հմտությունները: Մեդիակրթական գործընթացում կիրառվող այս կամ այն հնարի, մեթոդի ընտրությունը պայմանավորված է դասարանի մի շարք առանձնահատկություններով՝ սովորողների պահանջմունքներով և հետաքրքրություններով, դիրքորոշումներով, մեդիատիրույթին հաղորդակից լինելու դրդապատճառներով, տեղեկատվության ընկալման մակարդակով ու պատրաստակամությամբ: Սակայն մանկավարժության ոլորտում, մեդիակրթական և մեդիատեխնոլոգիական մեթոդական հնարների կիրառման արդյունավետությունը նշմարվում է ելնելով այն նպատակներից և խնդիրներից, որոնք մանկավարժը սահմանում է մեդիակրթական գործընթացն իրականացնելիս: Նման ընտրողականության մեջ, ուսուցիչը պետք է կարևորի հատկապես այն մեդիանյութերը, մեդիատեղեկատվությունը, որոնք օգտագործվելու են: Դիտարկենք մեդիակրթական

պարապմունքների կազմակերպման և իրականացման մի քանի տեխնոլոգիա (Festinger, L 2019):

Համընդհանուր ճանաչում ունի այն, որ ուսուցիչները չափազանց կարևոր դեր են կատարում ակտիվ և ընդհանուր մոտեցումների միջոցով ժողովրդավարական արժեքների խթանման գործընթացում: Ժողովրդավարական քաղաքացիության կրթության (ԺՔԿ) և մարդու իրավունքների կրթության (ՄԻԿ) հաջողությունը էապես պայմանավորված է մասնագիտական հմտությամբ:

ԺՔԿ/ՄԻԿ-ը բնական և «իրական» հնարավորություններ է ստեղծում աշակերտների (ինչպես նաև ուսուցիչների և այլ չափահասների) համար՝ «դրական ազդեցություն գործել» և քարոզել փոփոխություն, արմատավորված է համայնքային ներգրավվածության գաղափարներում. աշակերտները և ուսուցիչները կարող են մտնել երկխոսության մեջ գործընկերների հետ դպրոցի պատերից դուրս, հնարավորություն է ստեղծում ուսումնական ծրագրի շրջանակներում ավելին իմանալու այն հասկացությունների մասին, ինչիսիք են իրավունքը, մարդու իրավունքները, քաղաքական և շրջակա միջավայրին առնչվող խնդիրները:

Պետք չէ, որ այս գործիքը ձևավորի ԺՔԿ/ՄԻԿ ուսումնական ծրագրերի տարբեր մոդելների վերաբերյալ , չնայած պետք է նշել, որ միջառարկայական կապը հաճախ ավելի ուժեղ է թղթի վրա, քան դասապրոցեսում, որտեղ քաղաքացիական կրթությունը կարող է լինել ենթադրվող, մասնատված կամ անիրական: Արդյունքները հաճախ չեն իրականացրել ակնկալիքները, և այդ ջանքերին հաճախ փոխարինելու է եկել առավել կենտրոնացած մոտեցումը. օրինակ՝ որոշակի ուսումնական ծրագրի շրջանակում, առավել իրական վարքագծային, ծրագրային դասավանդում: Բոլոր ուսուցիչները պետք է կարողանան հաշվի առնել իրենց առարկաների հիմքը, դրսևորել քննադատական մոտեցում, կապել այլ ոլորտների և բնագավառների, ինչպես օրինակ՝ քաղաքացիության հետ, և հետազոտել դրանց սոցիալական ծառայությունը, ժամանակակից մշակույթի հետ դրանց փոխհարաբերությունը, որպես համընդհանուր արժեք՝ խթանել հանդուրժողականությունը, հավասարության խնդիրները, բազմազանությունը և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը:

Այն ուսուցիչները, որոնք ավելի շատ բան գիտեն առարկայի մասին, ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ են իրենց դասավանդման մեթոդների մեջ:

Նրանք ավելի հավանական է, որ կկառուցեն արդյունավետ անհատական դասեր և շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման,ուսուցման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը և հմտությունները: Եթե ուսուցիչն ունի ԺՔԿ/ՄԻԿ կոնցեպցիաների և սկզբունքների մասին միայն սահմանափակ գիտելիք, դժվար թե նա ցանկանա աշակերտներին ներգրավել ժողովրդավարական քաղաքացիության բարդ հայեցակետերում և ավելի հավանական է, որ կդասավանդի դիդակտիկ եղանակով՝ կանխելով աշակերտների մասնակցությունը և հարցադրումները: Աշակերտները պետք է հասկանան, թե ինչ է ժողովրդավարական քաղաքացիությունը. նրանք պետք է ունենան գրագիտության պատշաճ մակարդակ՝ հասկանալու համար քաղաքական գործընթացները: Ուստի, ուսուցիչները պետք է խթանեն քաղաքացիության «գրագիտության» մի շարք հայեցակետեր աշակերտների հետ աշխատանքի ընթացքում: Մենք տարբերակում ենք «գրագիտության» չորս տեսակ՝ քաղաքական և իրավական, սոցիալական և մշակութային, տնտեսական (Борытко Н.М. 2009):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Դասարանը, որտեղ կատարվել է իմ հետազոտությունը 8-րդ դտասարանն է: Դասարանում սովորում է 21 աշակերտ, ունենք երկու ներառված աշակերտ: Ներգրավվածության խնդիր կա հատկապես տղաների մոտ, որոնք առարկայի նկատմամբ չունեն մեծ հետաքրքրություն:

Դասին աշակերտների ներգրավվածության հարցը մտահոգիչ է, քանի որ սովորողների մոտ նկատվում է ընթերցանության պակաս։ Այդ իսկ պատճառով օգտագործելու եմ մեդիակրթությունը և մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսին։

Օգտագործվելու են ֆիլմերի ցուցադրումներ, սցենարների կազմում, բանավեճ, զրույց մեթոդները։

Խնդիրը լուծելու երկու եղանակ է ընտրված՝ մեդիագրագիտություն և դաստիարակություն, իսկ հիմնականը՝ նոր տեխնոլոգիաների կիրառում։ Հայֆիլմի միջոցով փորձելու ենք խթանել սովորողների պատկերացումները հայ և համաշխարհային կինոմատոգրաֆիայի նկատմամբ, բնապահպանական խնդիրների և արվեստի նկատմամբ մարդու վերաբերմունքի մասին պատկերացումները։ Այս հանգամանքը նպատակ կունենա հասկանալ սովորողների կարիքները՝ հաշվի առնելով կողմ և դեմ կարծիքները և առողջ բանավեճի կարողունակությունը։ Հետազոտության առաջին մասում ներակայացված են ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսին, որոնց միջոցով անցկացվել են ժամանակակից դասեր և դրանց հիման վրա վերջնարդյունքի գրանցում։

Երկրորդ մասում ներկայացված են սովորողների աշխարհայացի ձևավորմանը նպաստող աշխատանքները և դրանց առնչվող խնդիրները։

Այս դեպքում իմ խնդիրը լինելու է մեծապես ազդել սովորողների խոսքի զարգացմանը,ՏՀՏ-ներից օգտվելու և պրակտկայում այն օգտագործելու հմտությունների զարգացումը։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Հետազոտական աշխատանքի խնդիրն էր սոորոողների ներգավվածությունը դասապրոցեսին: Դիտարկումը կատարվել էր 8-րդ դասարանում, որտեղ սովորում է 21 աշակերտ: Աշակերտները գրականության դասաժամերին ցուցաբերում են մեծ հետաքրքրություն, սակայն տղաների մի խումբ ցանկություն չի ցուցաբերում դասերն մասակցելու, կարծիք արտահայտելու: Դասարանում կան երկու ներառված աշակերտներ, որոնք առավել մեծ հետաքրքրութուն ունեն առարկայի նկատմամբ,ուստի իմ աշխատանքները կենտրոնացված են դասարանի ընդհանուր ներգրավվածությունը մեծացնելու, սովորողներին մոտվացնելու ուղղությամբ: Կարծում եմ՝ մոտիվացիան մեծ խթան կհանդիսանա աշակերտների ներգրավվածության հարցում,ինչպես նաև սովորողների մեդիակրթական համակարգ ձևավորելը և մանկավարժական տեխնոլոգիաների օգտագործումը:

Հետազոտությունը կատարել եմ մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման հիման վրա, որտեղ կատարել ենք մի քանի դիտարկումներ:

Որպես գործիք՝ օգտագործվել են ինտերակտիվ զրույց, հակիրճ դասախոսություն - քննարկում, PP ներկայացում:

Մանկավարժական տեխնոլոգիաների ուսումնասիրումը և վերլուծությունը հնարավորություն տվեց բացահայտելու դրանց կառուցվածքային տարրերը, առանձնահատկությունները, բնութագրերը, դրանց առաջացման և զարգացման օրինաչափությունները:

Կարևորելով այն, որ ուսուցման հիմքը «ժամանակի, առարկայի և մեթոդների հմուտ բաշխումն է» չեխ մանկավարժը, հենվելով արտադրական տեխնոլոգիաների սկզբունքի վրա, փորձեց մշակել մանկավարժական տեխնոլոգիա, որի հիմնական տարրերն են.

- դպրոցում դաս-դասարանային համակարգի կիրառումը
- ուսուցման առարկայական բնույթը
- ուսումնական նյութի ճիշտ շարադրում՝ գիտականություն, համակարգվածություն, հաջրոդականություն, մատչելիություն, գիտելիքների հաջորդական հաղորդումը և յուրացումը:

Ուսուցման գործընթացի տեխնոլոգիականացման գաղափարը դիտարկել են նաև մի շարք խոշոր մանկավարժներ: Իոհան Պեստալոցցին մանկավարժության մեջ իր մեծ ներդրումը համարում է կրթության այնպիսի «մեխանիզմի» ստեղծումը, որի վրա

հենվելով յուրաքանչյուր ուսուցիչ կարող է դաստիարակել ցանկացած աշակերտի: (Աստվածատրյան Մ.Գ. et. al. 2004

Դասավանդման ընթացքում կիրառված մեթոդները նպաստեցին սովորողների ստեղծագործական կարողությունները զարգացնելու գործընթացին: Առաջին դասաժամին Գ. Սունդուկյանի <<Պեպո>> կատակերգության դասգրքի հատվածի հիմնական գաղափարը ներկայացնելուց հետո ձևավորեցինք 4 խուբ, որոնց առաջարկվեց մշակել սցենար՝դերախաղով այն ներկայացնելու համար: Սովորողների մեծ մասը մեծ հետաքրքրությամբ կատարեց առաջադրանքը

Առանձնացրել եմ մանկավարժական տեխնոլոգիայի հետևյալ փուլերը.

- Երեխայի անձի զարգացման վրա միջավայրի բնական, սոցիալական, մշակութային գործոնների ազդեցության, ինչպես նաև երեխայի ժառանգական, ֆիզիոլոգիական, հոգեկան, սոցիալական բնութագիչների ուսումնասիրում:
- Ընդհանրացնել, համալրել աշխարհի մասին երեխայի պատկերացումները բնության, աշխատանքի և հասարակական հարաբերությունների միջոցով: «Ընտանիք-ծառեր-երկիր-աշխարհ» համակարգի վերաբերյալ գիտելիքների հաջորդական յուրացումը նպաստում է արժեքային պատկերացումների ձևավորմանը, ինչը հնարավոր չէր միկրո միջավայրի պայմաններում:
- Կյանքի կազմակերպում, վերաձևավորումը: Հենվելով տիրապետած գիտելիքների, կարողությունների և հմտությունների վրա՝ սովորողը կարող է փոխել միկրո միջավայրը և դրսևորել հասարակայնորեն նշանակալի գործունեություն:

Ֆ.Ա.Ֆրադկինը նշում է, որ այսպիսի մոտեցումը նպաստում է կենցաղի, մշակույթի, ընտանիքում ծնողների և երեխաների, դպրոցում ուսուցիչների և սովորողների փոխհարաբերությունների բարելավմանը: Կրթադաստիարակչական գործընթացը, ըստ նրա, նպատակաուղղված է կյանքի վերակազմավորման արդյունավետ ուղիների որոնմանը:

Մեծ մանկավարժը կարևորում էր ոչ թե որոշ ավանդույթների հորինումը և պարտադիր կիրառումը կոլեկտիվում, այլև դրանց դաստիարակումը և պահպանումը: Հիմնարար տարր է նաև երեխաների արտադրական աշխատանքը: Սակայն աշխատանքը

ընդհանուր համակարգի մի մասն է, դաստիարակության միջոց և առանց ոսուցման հնարավոր չէ քննարկել դաստիարակության հիմնահարցերը:

Գիտական գրականության վերլուծության արդյունքում բացահայտվեց, որ մանկավարժական տեխնոլոգիաների հիմքում հայեցակարգային դրույթներ են, գաղափարներ, որոնք սահմանում են կրթադաստիարակչական գործընթացի բովանդակությունը, սուբյեկտների փոխազդեցության եղանակները, գործունեության ձևերը: Ցանկացած տեխնոլոգիա ձևավորվում, գործում և զարգանում է որոշակի նախադրյալների համատեքստում՝ սոցիալ-պատմական, սոցիալ-մշակութային,, տնտեսական և այլն: Այն ենթադրում է մանկավարժական տեխնոլոգիաների զարգացման և կայացման հաջորդականությունն որոշող օրինաչափությունների առկայություն:

Դասի երկրորդ ժամին ստուգվեց սովորողների քննադատական մտածողության զարգացումը. դասարանը բաժանվեց երկու թիմի. առաջարկվեց թիմերին կողմ և դեմ հակադարձումներով կարծիք արտահայտել հայ և համաշխարհային կինոարվեստի նկատմամբ: Աշակերտները կարողացան առողջ բավավեճի միջավայր ստեղծել, անհատական կարծիքներ արտահայտել հատկպես նոր ժամանակների մինոմատոգրաֆիայի նկատմամբ:

Հարկ է նշել նաև, որ մանկավարժական տեխնոլոգիա հասկացությունն ավելի լայն իմաստ ունի, քան ուսուցման տեխնոլոգիան և դաստիարակության տեխնոլոգիան: Իր բազմաձևության մեջ դիտարկվում է մանկավարժական տեխնոլոգիայի առաջացման երկու տեսակետ՝ առաջինի դեպքում այն առաջացել է տեսությունից, երկրորդ դեպքում տեխնոլոգիան սկիզբ է առնում պրակտիկայից:

Ա.Ս.Մակարենկոն իր հայտնի «Մանկավարժական պոեմ» աշխատությունում գրել է. «Մերմանկավարժականստեղծագործությունըերբեքչիկառուցվելտեխնոլոգիականտրամաբանությանվրա, այլմիշտկառուցվելէբարոյականքարոզներիհիմանվրա»: Նա գտնում է, որ դա է պատճառը, որ ներկայումս էլ մանկավարժության մեջ բացակայում են շատ կարևոր բաժիններ:

Անհարժեշտ է մանկավարժական տեխնոլոգիան տարբերել ուսուցման մեթոդիկայից: Տարբերությունը նրանում է, որ մանկավարժական տեխնոլոգիան վերարտադրելով, սահմանելով անպայման ապահովում է կրթադաստիարակչական գործընթացի բարձր

արդյունավետություն, լուծում առաջադրված մանկավարժական խնդիրները, իսկ մեթոդիկան ու միշտ է ապահովում անհրաժեշտ որակը: Միևնույն ժամանակ մեթոդիկան կարող է հասնել տեխնոլոգիայի մակարդակին: Օր՝ գոյություն ունի գիտելիքների գնահատման որոշակի մեթոդիկա և եթե այն բնորոշվում է օբյեկտիվությամբ, հուսալիությամբ, ապա կարելի է անվանել մանկավարժական տեխնոլոգիա:

Մանկավարժական տեխնոլոգիան փոխկապակցված է մանկավարժական վարպետության հետ: Մանկավարժական տեխնոլոգիան ոչ միայն ուսուցման գործընթացում համակարգիչների ու տեխնիկական այլ միջոցների կիրառումն է, այլ նաև ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով խնդիրների, սկզբունքների, մեթոդների ուսումնասիրման և կիրառման գործընթացը: (Загвязинский В.И. 2010):

Օգտագործվող մեթոդները նպաստում են սովորողի բառապաշարի հարստացմանը, խոսքի զարգացմանը, ձևավորվում են մշակութային և ժողովրդավարական արժեքներ, սովորողները գնահատում են այդ գրականության դերը համաշխարհային մարտահրավերային ասպարեզում: Կարողանում են վերլուծել պատմվածքների, պիսների հիմնական գաղափարը, բնութագրել կերպարներին, սակայն աշակերտներից ոմանք կարիք ունեն ուշադրության կենտրոնացման, նրանց մի խումբ հակված է համակարգչային խաղերին, ուստի նրանց հետ տարվել է մեդիագրագիտության դասեր: Կարծում եմ՝ բոլոր աշակերտներն ունեն դրա կարիքը:

8-րդ դասարանի գրականություն առարկայի դասավանդման ժամանակ Գ. Սունդուկյանի <<Պեպո>> պիեսի հիման վրա նկարահանված <<Հայֆիլմ>> կինոստուդիայի ֆիլմաշարից ցուցադրվեցին հատվածներ, որի ցուցադրման ժամանակ աշակերտներից ոմանք պարզապես անտարբեր էին: Խնդրահարույց էր իրավիճակը, աշակերտների մեծամասնությունը ցանկանում էր դիտել հատվածներ, տղաներից որոշները հակված էին արտասահմանյան ֆիլմեր դիտելուն և շեղել էին դասից: Դասավանդման ժամանակ խնդիրը լուծելու տարբերակներ որոնելուց եկա այն եզրակացության, որ մեր սովորողների մեծ մասը կարիք ունի մեդիակրթության, իսկ ինչ է այն իրենից ներկայացնում:

Մանկավարժության ոլորտում, մեդիակրթական և մեդիատեխնոլոգիական մեթոդական հնարների կիրառման արդյունավետությունը նշմարվում է՝ ելնելով այն նպատակներից և խնդիրներից, որոնք մանկավարժը սահմանում է մեդիակրթական գործընթացն իրականացնելիս: Նման ընտրողականության մեջ ուսուցիչը պետք է կարևորի հատկապես այն մեդիանյութերը, մեդիատեղեկատվությունը, որոնք օգտագործվելու են: Դիտարկեցի մեդիակրթական պարապմունքների կազմակերպման և իրականացման մի քանի տեխնոլոգիա:

Սովորողների ճանաչողական հետաքրքրությունների, ակտիվության խթանման արդյունավետ եղանակ է, որը նպաստում է մեդիակարողությունների ձևավորմանը մեդիատեղեկատվության հետ աշխատելու հմտությունների զարգացմանը: Նման դասագործընթացի կառուցվածքն ու բովանդակությունը կտրուկ տարբերվում են ավանդականից թե՛ սովորողների ներգրավվածության աստիճանով, և թե՛ նրանց կողմից իրականացվող գործողությունների բնույթով, փուլերով: Սովորողները ընտրում են, քննարկում առավել արդիական, հետաքրքրական, հրատապ հիմնախնդիր, մեդիատեղեկատվություն: Աշխատանքը կազմակերպում եմ ինչպես խմբային, այնպես էլ անհատական: Դասաժամի նպատակային և պլանավորված կազմակերպումը ենթադրում է գործունեության ձևերի շահեկան համադրում /կոլեկտիվ, անհատական, նախագծային/, ինչը կապահովի մրցակցային հավասար պայմաններ սովորողների ինքնադրսևորման համար: ՏՀ տեխնոլոգիաների տարրեր արդյունավետ օգտագործելու համար յուրաքանչյուր ուսումնական հաստատությանն անհրաժեշտ է համապատասխանաբար կահավորված և տեխնիկական մեդիամիջոցներով հագեցված դասարան:

Դրանց շարքում իհարկե գերակայում են տեղեկատվական-հաղորդակցական, զարգացնող ուսուցման, քննադատական մտածողության զարգացման տարրեր: Բերեմ օրինակ, մեդիակրթական ներգործություն իրականացնելիս գրականության հաջորդ դասի համար է սահմանել էի մի քանի նպատակ՝ իրականացնելով դրանք մի քանի դասաժամերի: Առաջին օրը համակարգչով ցուցադրեցինք 1959 թ-ին, ռեժիսորներ Գրիգոր Մելիք-Ավագյանի և Երվանդ Ծատուրյանի ”Հայֆիլմ” կինոստուդիայում նկարահանված, հայկական սև-սպիտակ “Ինչու է աղմկում գետը” գեղարվեստական ֆիլմը:Դիտմանը հաջորդող դասը եղավ ֆիլմի քննարկում, որը նպատակահարմար էր

իրականացնելու փոխներգործուն մեթոդների միջոցով, արդյունքում իրացնելով երեք դասանպատակ՝

- Սովորողների մեդիագրագիտության ձևավորում և զարգացում /իրազեկություններ հայկական կինոարտադրության, տվյալ ֆիլմի ստեղծման, ֆիլմի ռեժիսորների և ստեղծագործական խմբի այլ անդամների, ֆիլմում զբաղված դերասանների և գլխավոր դերերում հանդես եկող տաղանդավոր դերասանների, ֆիլմի նկարահանման համար օգտագործված մեդիատեխնիկայի վերաբերյալ/:
- Հայրենասիրական և էկոլոգիական դաստիարակություն /ֆիլմի սյուժեյի իմաստավորում, գլխավոր հերոս՝ Աթանես Ղամբարյանի հզոր կերպարի գիտակցում, հայրենի բնության գեղեցկության, հայոց աշխարհի պատմա-աշխարհագրական դիրքի ընկալում և արժևորում, հայրենիքի և պետականության գաղափարի ամրապնդում/:
- Ազգային ինքնագիտակցության և բարոյական արժեհամակարգի ձևավորում /հայի հավաքական ուժի, միասնականության, հայ ընտանիքի ամրության, ազգային արժեքների և հայրենի բնության անվերապահ պահպանման վճռականություն/:

Ինչպես տեսանք ժամանակակից մեդիակրթության անքակտելի բաղադրամասն են հանդիսանում ուսուցմնական աշխատանքի կազմակերպման փոխներգործուն մեթոդները: Փոխներգործուն մեդիաուսուցում ասելով հասկանում ենք՝” սովորողների, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների և մեդիատեխնոլոգիական գործիքակազմի միջոցով, մեդիադաշտում ծավալվող, անմիջական, առցանց, հեռավար և տարածական համագործակցության և փոխներգործության վրա հիմնված, համատեղ իմացական գործունեություն”: Փոխներգործուն մեդիաուսուցման հիմնական տեխնոլոգիաների շարքում, առանձնացվում է ուսունական գործընթացի սուբյեկտների մի քանի

- ✓ երկխոսական փոխներգործության տեխնոլոգիան;
- ✓ խմբային- համագործակցային տեխնոլոգիան;
- խնդրահարույց ուսուցման տեխնոլոգիան;
- ✓ նախագծային տեխնոլոգիաները:

Այսպիսով, մեդիամշակույթի և մեդիակրթության տեսության և պատմության ուսումնասիրումը, մեդիամանկավարժներին ընձեռում է մեդիամշակութային ոլորտի

ստեղծագործությունների օգտագործման միջոցով, ուսումնական գործընթացում, իրացնել ժամանակակից կրթական փոխներգործուն մեթոդների ու հնարների նորովի կիրառում՝ մշակելով, հեռուստատեսության, համացանցի, ֆիլմարտադրության, մամուլի և այլ զանգվածային մեդիաների շրջանակներում ստեղծվող առանձին մեդիատեքստերի և ընդհանուր մեդիաարտադրանքի հիման վրա, կրթող, ուսուցանող, դաստիարակող, ձևավորող և զարգացնող բնույթի դասաժամերի իրացման տարաբնույթ տեխնոլոգիաներ:

Մեդիակրթական նախագծերի իրացումը, մեդիամշակութային ստեղծագործությունների հետ աշխատանքի փոխներգործուն եղանակները, խնդրահարույց հարցերի և իրադրային խնդիրների առաջադրումն ու լուծումը նպաստում են մեդիակրթության հիմնական նպատակի՝ սովորողների մեդիագրագիտության, մեդիահիմտությունների և մեդիամշակույթի ձևավորման իրականացմանը: Նշված նպատակի իրականացումը պայմանավորվում է ոչ այնքան յուրացված տեղեկատվության քանակով, կամ ձեռք բերված գիտելիքների հանրագումարով, որքան, մեդիադաշտում և նրա սոցիալ-հոգեբանական, կթական, ուսումնական և դաստիարակչական ներգործության արդյունքում առաջացող խնդրահարույց իրավիճակներում կողմնորոշվելու և դրանք հանգուցալուծելու կարողությամբ, տեղեկատվության թիրախային ընտրություն և նպատակային գործողություններ կատարելու ընդունակությամբ: Ուստի և ծավալվող մեդիակրթական աշխատանքից, մեդիակրթական պարապմունքների կազմակերպման և իրացման տեխնոլոգիաներից անկախ, մեդիամնկավարժական գործունեությունը պետք է կառուցվի իբրև ամբողջական համակարգ, իսկ յուրաքանչյուր մեդիապարապմունք հետապնդի որոշակի նպատակ և ներառի լուծման ենթակա մանկավարժական խնդիրների համալիր (Ամիրջանյան Յու. et.al. 2005):

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտելով <<Սովորողների ներգրավվածությունը դասին մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ>> թեմայով աշխատանքը՝ մենք վեր հանեցինք մի շարք գործոններ, որոնք ազդում են սովորողների մոտիվացիայի վրա։
Առարկաների ժամաքանակների առկայությունը և բազմազանությունը դրականորեն է ազդում աշակերտների սովորելու մոտիվացիայի վրա, որը հնարավորություն է տալիս սովորողին ներգրավել դասին։ Սովորողների ներգրավվածության վրա դրականորեն են ազդում ուսուցիչների կողմից կիրառվող մեթոդները և ժամանակակից տեխնոլոգիաները. օրինակ՝ բանավեճը, մտագրոհը, դերային խաղը, սցենարների կազմումը և ֆիլմերի դիտումը, որոնց ժամանակ սովորողները կարող են նոր բան սովորել ոչ միայն ուսուցչից. այլ նաև միմյանցից։ Դասընթացը փոքր խմբերում նպաստում է սովորողների մոտիվացված սովորելու վրա, քանի որ յուրաքանչյուրին անհատական մոտեցում է ցուցաբերվում ուսուցչի կողմից։ Պետք է նախապես հստակ սահմանված լինեն դասի նպատակները, որպեսզի վերջնարդյունքում գրանցվեն դրական արդյունքներ։ Բացասական խնդիր է հանդիսանում սովորողների անվստահությունը և անտարբերությունը առարկայի նկատմամբ։ Ցուցադրումը հանդիսանում է դրդապատճառ, որպեսզի սովորողները ավելի մոտիվացված մոտենան առարկայի խորությանը։
Մեր կողմից կարելի է մշակել առաջարկներ,որոնց հետևանքով կմեծանա սովորողների ներգրավվածությունը դասին։ Ստեղծել այնպիսի պայմաններ, որտեղ աշակերտները կհասկանան և վստահ կլինեն ապագայի նկատմամբ։
Հետազոտության արդյունքում կիրառվեցին փորձարարական-որոնողական բազմաթիվ աշխատանքներ, որոնք նպաստեցին ուսուցման գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու գործին։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, -Եր.:Մանկավարժ, (2005), -157-187 էջեր:
2. Աստվածատրյան Մ.Գ.և ուրիշներ (2004). Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցում, Եր.:"Աստղիկ"հրատ, էջ 14-52:
3. Leon Festinger (2019)«Մոտիվացիայի տեսությունները և դրանց կիրառումը կազմակերպություններում. Ռիսկերի վերլուծություն» աշխատությունում ՝ «Հետազոտության թռիչք»: Վերցված է ՝ Research Leap- ից ՝ researchleap.com:
4. Борытко Н.М. (2009), Методология и методы психолого-педагогических исследований: учеб. пособие для студ. высш. учеб. заведений / Н.М. Борытко, А.В. Моложавенко, И.А. Соловцова; под ред. Н.М. Борытко, 2-е изд, стер., М.: Издательский центр «Академия», 320 с.
5. Загвязинский В.И. (2010), Методология и методы психолого-педагогического исследования: учеб. пособие для студ. высш. учеб. заведений / В.И. Загвязинский, Р. Атаханов, 6-е изд., стер., М.: Издательский центр «Академия», 208 с.